ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
«ՄԱՐԱԼԱՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

3021, ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, Գ. ՄԱՐԱԼԱՆՋ (098)-38-68-50

№ 06

« 25 » Փետրվար, 2019թ.

ՀՀ Շիրակի մարզպետ
Պարոն Տ. Պետրոսյանին

Հարգելի պարոն Պետրոսյան
Հաստատությունում առաջացած աշխարհագրություն առարկայի ուսուցչի թափուր աշխատատեղի համար հայտարարված մրցույթը տեղի կունենա 2019թ.-ի մարտի 29-ին՝ ժամը 11:00-ին:
Կից ներկայացվում է մրցույթի հայտարարությունը:

Տնօրեն /Մ. Սարգսյան/

Հ. ԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԿԱՆԱՅԻՆ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 2998-19
25. 02. 19 թ.

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի <<Սարալանջի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ–ի աշխարհագրության (13 ժամ) ուսուցչի թափուր աշխատատեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) Հանձնաժողովի անունով գրավոր դիմում, նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2) Փաստաթուղթ (դիպլոմ), <<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3) Անձնագրի պատճենը,

4) Ինքնակենսագրություն (Ձև 4),

5) Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6)Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկը

Փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից մինչև մարտի 26-ը ներառյալ, ամեն օր բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10.00-ից 15.00-ը:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2019թ. մարտի քսաներեքին ժամը 11.00-ին <<Սարալանջի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում : Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, գ.Սարալանջ:

Տեղեկությունների համար զանգահարել (098) 38-68-50 հեռախոսահամարով: